ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՆԻ ՉՈԲԱՆՅԱՆ

«ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ»

ԺԲ. 00.06 - «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2021

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ГРИГОР АРМЕНОВИЧ ЧОБАНЯН

«ЭКОНОМИЧЕСКИЙ СУВЕРЕНИТЕТ ГОСУДАРСТВ В КОНТЕКСТЕ МЕЖДУНАРОДНОГО ПРАВА»

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук

по специальности 12.00.06 – «Международное право»

ЕРЕВАН-2021

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների թեկնածու **Վ. Դ. Վարդանյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Վ. Հ. Հովհաննիսյան**

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Կ. Ա. Գևորգյան**

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ արդարադատության ակադեմիա

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021 թվականի հուլիսի 19-ին, ժամը 12^{00}-ին ՀՀ ԲՈԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք.Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2021 թվականի հունիսի 8-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ իրավ. գիտ. թեկ., դոցենտ **Տ. Հ. Սուջյան**

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель: кандидат юрид. наук **В. Д. Варданян**

Официальные оппоненты: доктор юрид. наук, профессор **В. А. Оганесян**

кандидат юрид. наук, доцент **К. А. Геворгян**

Ведущая организация: **Академии юстиции РА**

Защита диссертации состоится 19-ого июля 2021 г. в 12^{00} часов на заседании Специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г.Ереван, ул.Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 8-ого июня 2021 года.

Ученый секретарь специализированного совета: кандидат юрид. наук, доцент **Т. О. Суджян**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ինքնիշխանության գաղափարը լայնորեն և բազմակողմանիորեն քննարկվել է տարբեր հեղինակների կողմից տարբեր ժամանակաշրջաններում: Պետք է փաստել, որ հայեցակարգը սկզբնավորումից ի վեր անընդհատ կրել է էական փոփոխություններ: Ինքնիշխանության հայեցակարգը յուրաքանչյուր անգամ վերաիմաստավորվել է պատմաքաղաքական որոշակի իրադարձությունների արդյունքում: Հետևաբար՝ թեման ոչ միայն չի կորցրել, այլև էլ ավելի է հաստատել իր արդիականությունը ժամանակակից գլոբալիզացիոն գործընթացների համատեքստում: Ավելին՝ պետության ինքնիշխանության ոչ բոլոր ասպեկտներն են, որ կարելի է համարել լիարժեքորեն ուսումնասիրված: Գլոբալիզացիայի արդյունքում կատարված փոփոխություններն էական ազդեցություն են ունեցել հատկապես պետությունների տնտեսական ինքնիշխանության ավանդական պատկերացումների վրա: Վերջին տասնամյակներում պետությունների անդամակցությունը տարբեր կազմակերպությունների և միությունների, որոնք ունեն իրավական, քաղաքական և տնտեսական տարբեր համակարգեր, էլ ավելի են հիմնավորում ատենախոսության թեմայի արդիականությունը: Տնտեսական գլոբալիզացիան էականորեն փոփոխում է պետությունների տնտեսության առաջնահերթությունները, և առաջ է գալիս տնտեսական ինքնիշխանության պահպանման անհրաժեշտություն:

Տնտեսական ինքնիշխանություն հասկացությունը թեպետ հաճախ է վկայակոչվում միջազգային իրավունքի տեսությունում և միջազգային հարաբերությունների պրակտիկայում, այն, միևնույն է մնում է ամենախրթին և ոչ ամբողջական ուսումնասիրված կատեգորիաներից մեկը: Հետևաբար՝ ատենախոսությունում ուշադրության կենտրոնում է եղել բացառապես պետությունների տնտեսական ինքնիշխանության խնդիրը: Մասնավորապես, ի տարբերություն պետությունների ինքնիշխանությունը միջազգային իրավունքի համատեքստում դիտարկող գիտական ուսումնասիրությունների, սույն աշխատանքում առանձնացվել և քննարկվել են տնտեսական ինքնիշխանության բաղադրատարրերը:

Գլոբալիզացիոն մարտահրավերները վերափոխել են պետությունների տնտեսական ռազմավարության առաջնահերթությունները՝ առաջին պլան մղելով անվտանգ և ինքնուրույն տնտեսություն ստեղծելու խնդիրը: Մինչդեռ, ազգային տնտեսության կայուն զարգացումը ժամանակակից աշխարհում հնարավոր է միայն ինտեգրացիոն գործընթացներին համա-

հունչ քաղաքականություն և միևնույն ժամանակ ինքնիշխան տնտեսություն ունենալու դեպքում:

Հենց այս մարտահրավերներն էլ հաշվի առնելով՝ աշխատանքի առանձին պարագրաֆներում քննարկվում են պետությունների ինքնիշխանությունը բնական ռեսուրսների նկատմամբ, օտարերկրյա ներդրումների ոլորտում, մաքսային և հարկային ոլորտներում, հատուկ ուշադրության է արժանացել պետությունների արժութային ինքնիշխանությունը: Աշխատանքում համակողմանիորեն ներկայացվել է վերջին շրջանում բլոկչեյն տեխնոլոգիաների ներմուծման հետևանքով պետությունների ինքնիշխանությանը սպառնացող մարտահրավերները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել պետությունների տնտեսական ինքնիշխանությունը և դրա բաղադրատարրերը, ժամանակակից գլոբալիզացիոն գործընթացների և տեխնիկական զարգացումների ազդեցությունը պետության ինքնիշխանության վրա և տնտեսական ինքնիշխանության իրացման ձևերը ժամանակակից գլոբալիզացիոն գործընթացների համատեքստում:

Նշված նպատակից բխում են ատենախոսության հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել պետությունների ինքնիշխանությունը ժամանակակից գլոբալիզացիոն գործընթացների համատեքստում,
- Ուսումնասիրել պետությունների տնտեսական ինքնիշխանության հասկացության էությունն ու դրա հիմնական բաղադրատարրերը,
- Պետությունը դիտարկել որպես տնտեսական ինքնիշխանություն իրացնող հիմնական սուբյեկտ,
- Սահմանել, թե որոնք են պետությունների տնտեսական ինքնիշխանությունից բխող իրավազորությունների սահմանները,
- Ընդգծել միջազգային համընդհանուր կարգավորումների կարևորությունը ժամանակակից միջպետական տնտեսական հարաբերությունների ոլորտում:

Հետազոտության օբյեկտը պետությունների տնտեսական ինքնիշխանությունն է միջազգային իրավունքի համատեքստում:

Հետազոտության առարկան արդի գլոբալացման պայմաններում պետությունների ինքնիշխանության, պետության տնտեսական ինքնիշխանության բաղադրատարրերի, մասնավորապես՝ բնական ռեսուրսների նկատմամբ, օտարերկրյա ներդրումների ոլորտում պետությունների ինքնիշխանության, մաքսային, ֆիսկալ և արժութային ինքնիշխանության,

ինչպես նաև պետությունների ինքնիշխանության համատեքստում կրիպտոարժույթների ազդեցությանն առնչվող հիմնախնդիրներ են:

Ատենախոսության տեսական հիմքերը: Ատենախոսությունը գրված է հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն հրատարակված տարաբնույթ սկզբնաղբյուրների և գիտական հետազոտությունների, մամուլի հրապարակումների, էլեկտրոնային աղբյուրների ուսումնասիրության հիման վրա:

Ատենախոսության համար առանցքային սկզբնաղբյուրների շարքում առաջին հերթին հարկ է առանձնացնել Թ. Հոբսի «Լևիաթան» աշխատությունը, ինչպես նաև Ժան Բոդենի «Վեց գիրք պետության մասին» ուսումնասիրությունը, որում կարող ենք տեսնել պետությունների ինքնիշխանության մասին առաջին պատկերացումները: Ատենախոսության առաջին գլխում գլոբալիզացիոն զարգացումների համատեքստում պետությունների ինքնիշխանությանն ընդհանրական անդրադարձ կատարելիս օգտակար է եղել Քրիստոֆեր Լ. Բլեքսլիի «Միջազգային իրավական համակարգ» վերտառությամբ աշխատանքը, որտեղ հեղինակը ընդգծում է պետության՝ որպես ինքնիշխանություն կրող հիմնական սուբյեկտի առանցքային նշանակությունը, իսկ պետությունների ինքնիշխանության ուսումնասիրության աղբյուր են եղել Ջ. Տրախտմանի, Ջ. Քամիլերի, Ջ. Ֆալկի, Գ. Սաբինի, և Դերմոտ մք Քենի, Մ. Բեջաուիի, Ի. Պ. Բլիշչենկոյի և այլոց աշխատությունները:

Բնական ռեսուրսների նկատմամբ պետությունների մշտական ինքնիշխանության պատմական զարգացումն ուսումնասիրելիս օգտագործվել Ջ. Բրոունլիի և այլոց աշխատանքները: Նույն թեման համակողմանի քննելու համար ուսումնասիրվել են Պ. Սանգվանիի, Տ. Յոլանդայի և այլոց աշխատանքները:

Օտարերկրյա ներդրումների ոլորտում պետությունների ինքնիշխանության հարցի լուսաբանման համար օգտագործվել են Ն. Շրիյվերի, Գ. Կ. Դմիտրևայի և Ն. Ն. Վիկտորովայի, Է. Գունթրիփի, Մ. Սորնարաջայի և Բ. Վասանիի աշխատանքները: Նույն թեմայի շրջանակներում պետությունների՝ ազգայնացման և սեփականազրկման իրավունքն ուսումնասիրելիս օգտագործվել են Ռ. Դոլզերի և Կ. Շրոյերի, Ա. Ղասեմիի և այլոց տեսական դիտարկումները:

Պետությունների մաքսային և ֆիսկալ ինքնիշխանությունը ուսումնասիրելիս որպես օգտակար տեսական աղբյուրներ են ծառայել Միքալ Օվադեկի, Ռ. Սիլվեսթերի և Լորեն վան Ապեդուրնի աշխատանքները:

Պետությունների արժութային ինքնիշխանության ուսումնասիրությունների համար օգտագործվել են Ռ. Մունդելի, Կլաուս Դ. Զիմմերմանի, Ֆ. Մաննի, Ք. Հաջիեմանուիլի, Սարուշիի, Մարտուչիի, Ռ. Գյոբելի և այլոց աշխատանքները: Իսկ կրիպտոարժույթների ազդեցության տեսանկյունից ուսումնասիրությունները կատարվել են օգտագործելով Ջ. Էվերետի, Գուադամուզի, Ռ. Ֆրեբովիցի, Ի. Ցվետկովայի, Կ. Հեգատեկատիի և այլոց աշխատանքները:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը հասարակական գործընթացների և իրավական երևույթների ճանաչողության տեսության ժամանակակից դրույթներն են, ճանաչողության համագիտական մեթոդները՝ վերլուծությունը, համադրումը, համակարգային մոտեցումը, ինդուկցիայի և դեդուկցիայի տրամաբանական հնարքները:

Առաջադրված խնդիրները լուծելու նպատակով ատենախոսությունում օգտագործվել են իրավագիտության տեսական նվաճումները, ինչպես նաև գործնականում քննություն անցած գիտական ճանաչողության հնարքներ և մեթոդներ: Հեղինակը կիրառել է նաև ընդհանուր գիտական (դիալեկտիկական, համակարգային, դեդուկտիվ, ինդուկտիվ), ինչպես նաև մասնավոր գիտական (պատմաիրավական, տրամաբանաիրավական, համակարգակառուցվածքային, իրավահամեմատական, գործառութային) ուսումնասիրության մեթոդները:

Թեմայի առանձին ասպեկտների մշակման ընթացքում օգտագործվել են նաև մասնակի-գիտական մեթոդներ՝ պատմական, իրավահամեմատական:

Ատենախոսության գիտական նորույթը հետևյալն է.

ա) միջազգային իրավունքի լույսի ներքո համալիր գիտական ուսումնասիրության են ենթարկվել պետությունների տնտեսական ինքնիշխանության հիմնական բաղադրատարրերը, դրանց առանձնահատկություններն ու նշանակությունը պետությունների ինքնիշխանության համար,

բ) միջազգային իրավունքի ոլորտում առաջին անգամ մեկ աշխատանքի շրջանակներում ուսումնասիրության են ենթարկվել պետությունների ֆինանսատնտեսական ինքնիշխանության բաղադրատարրերը, ինչպես նաև ներկայացվել են այն պայմանները, որոնց առկայությունը սահմանափակում է տնտեսական ինքնիշխանության կոնկրետ տարրի ներքո պետությունների իրավազորությունների բացարձակ իրացումը,

գ) ցույց է տրվել ժամանակակից տեխնոլոգիաների ազդեցությունը պետությունների տնտեսական ինքնիշխանության վրա, մասնավորապես՝ ուսումնասիրության է ենթարկվել բլոկչեյն տեխնոլոգիաները և կրիպ-

տոարժույթները և դրանց ազդեցությունը պետությունների արժութային ինքնիշխանության ոլորտում և ինքնիշխանության վրա առհասարակ:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Ի տարբերություն այն տեսակետների, որ ժամանակակից տնտեսական հարաբերությունների համատեքստում պետությունները զիջել են իրենց ինքնիշխանության մի մասը, հեղինակը հիմնավորում է, որ իրավական տեսանկյունից չի կարող լինել ոչ լիարժեք ինքնիշխան պետություն, քանզի ինքնիշխանությունը պետության իրավասուբյեկտության էական տարրերից մեկն է: Հեղինակի պնդմամբ՝ ինքնիշխան իրավազորության զիջումն իրավաչափ կարելի է համարել այն դեպքում, եթե դա չի հակասում պետության սահմանադրական իրավակարգին, և պետությունն ունի հնարավորություն՝ վերականգնելու զիջած իրավազորությունները:

2. Հետազոտության արդյունքում հեղինակը վերահաստատում է, որ տնտեսական ինքնիշխանությունը՝ որպես իրավաբանական կատեգորիա, կախված չէ պետության սոցիալ-տնտեսական զարգացվածության աստիճանից. տնտեսապես ինքնիշխան են բոլոր պետությունները: Միևնույն ժամանակ հեղինակը նշում է, որ պետությունների տնտեսական ինքնիշխանությունը չպետք է հասկանալ բացարձակ իմաստով, քանզի միջազգային-իրավական որոշակի մեխանիզմների առկայությունը սահմանափակում է պետությունների տնտեսական ինքնիշխանությունից բխող իրավազորության բացարձակ իրացման հնարավորությունների շրջանակը:

3. Աշխատանքում նշվում է, որ բնական ռեսուրսների նկատմամբ մշտական ինքնիշխանության սկզբունքն իր էությամբ ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի կարևորագույն դրսևորումներից է և հանդիսանում է միջազգային սովորութային իրավունքի բաղկացուցիչ մաս: Միևնույն ժամանակ հեղինակը նշում է, որ բնական ռեսուրսների նկատմամբ մշտական ինքնիշխանության սկզբունքը չպետք է հասկանալ բացարձակ իմաստով և կան որոշակի պարտականություններ, որոնց իրականացման պարագայում կարելի է խոսել նշված սկզբունքից բխող իրավունքների արդյունավետ իրականացումից: Նման պարտականություններից են, մասնավորապես, ա) պարտականությունը՝ ձեռնպահ մնալ հարկադրանքից, միջամտությունից և այլ այնպիսի գործողություններից, որոնք կարող են խոչընդոտել այս կամ այն պետության ինքնիշխան իրավունքների և ազատությունների իրականացումը իրենց բնական ռեսուրսների, հարստության և տնտեսական գործունեության նկատմամբ, բ) պետության ռեսուրսներին հակաիրավական գործողություններով պատճառ-

ված վնասի հատուցման պարտականությունը, գ) պետությունների պարտականությունը՝ բարեխղճորեն համագործակցելու ռեսուրսներն օգտագործելու շրջանակներում՝ առանց այլ պետությունների վնաս պատճառելու, դ) մշտական ինքնիշխանության իրացման պարտականությունը պետության զարգացման և մարդկության բարօրության համար, ե) տեղաբնակ ժողովուրդների իրավունքների և շահերի պաշտպանության պարտականությունը, զ) միջազգային զարգացման նպատակով համագործակցելու պարտականությունը, է) բնական հարստության և ռեսուրսների պահպանման և կայուն օգտագործման պարտականությունը:

4. Ատենախոսը հիմնավորում է, որ միջազգային ներդրումային պայմանագրերում հաճախակի տեղ գտնող պետության՝ սեփականազրկում (expropriation) իրականացնելու հնարավորությունը սահմանափակող գործիքները, ինչպիսիք են կայունացնող դրույթները (stabilisation clauses), չեն կարող իրավաբանական պարտադիր ուժ ունենալ և սահմանափակել պետության իրավունքը՝ օտարերկրյա ներդրումների ոլորտում միջամտություն իրացնելու իր ինքնիշխան իրավազորությունը: Կայունացման դրույթների նպատակն, ըստ էության, ներդրումային պայմանագրի կնքման օրվա դրությամբ հյուրընկալ պետության կողմից այնպիսի օրենսդրական փոփոխությունների կանխումն է, որոնց հետևանքով կարող է էապես խաթարվել ներդրողի բնականոն գործունեությունը հյուրընկալ պետությունում: Հիմնվելով մի շարք արբիտրաժային գործերով (օրինակ՝ Aminoil-ի, Letco-ի գործերով) տրիբունալների կայացրած որոշումների վրա՝ հեղինակը գտնում է, որ կայունացնող դրույթների սահմանումը պայմանագրերում չի կարող սահմանափակել պետության՝ սեփականազրկում իրականացնելու հնարավորությունը, ինչը չի բացառում սեփականազրկում իրականացնելու պարագայում պետության կողմից ամբողջական, արագ և արդյունավետ հատուցում իրականացնելու պարտականությունը:

5. Հետազոտության արդյունքում հեղինակը հիմնավորում է, որ պետությունների ֆիսկալ ինքնիշխանությունը չի կարող ունենալ բացարձակ բնույթ, և պետությունների ստանձնած միջազգային իրավական պարտավորությունները, մասնավորապես՝ մարդու իրավունքներին վերաբերող միջազգային փաստաթղթերով սահմանված սեփականության իրավունքը, հեղինակի կարծիքով, ֆիսկալ ինքնիշխանության ոլորտում պետության ինքնիշխանությունը սահմանափակող գործիք են: Այդ իսկ պատճառով կրկնակի հարկման ոլորտում անձանց սեփականության իրավունքը

պաշտպանելու համար առաջարկվում է միջազգային ունիվերսալ փաստաթղթերում սահմանել կրկնակի հարկման առավելագույն շեմ:

6. Ի հակադրություն այն հեղինակների, ովքեր գտնում են, որ հարկային ոլորտում միջազգային պայմանագրերին միանալը ֆիսկալ ինքնիշխանության զիջում է, հեղինակը, օրինակ բերելով նաև Եվրոպական Միության շրջանակներում հարկային ոլորտին առնչվող կարգավորումները, հիմնավորում է տեսակետն առ այն, որ պետությունները հազվադեպ են զիջումներ անում միջազգային հարկային ոլորտում, և նշյալ ոլորտում միջազգային պայմանագրերին միացումը ֆիսկալ ինքնիշխանության իրացման միջոց է:

7. Չնայած այն ընկալմանը, որ տնտեսական միությունը ենթադրում է նաև արժութային միության առկայություն, իսկ վերջինս էլ՝ միասնական արժույթ ունենալու գաղափարը, հետազոտության արդյունքում հեղինակը հիմնավորում է ճիշտ հակառակ տեսակետը. տնտեսական միությունն ինքնին չի ենթադրում արժութային միություն, իսկ դրա շրջանակներում միասնական արժույթ ունենալը պարտադիր պայման չէ:

8. Հետազոտության արդյունքում հեղինակը հիմնավորում է, որ պետությունների տնտեսական ինքնիշխանության վրա էական ներգործություն ունեն նորագույն տեխնոլոգիաները, ինչպիսիք են բլոկչեյն տեխնոլոգիաները: Ատենախոսը նշում է, որ կրիպտոարժույթներով կատարվող գործարքները գնալով էլ ավելի մեծ մարտահրավերներ են նետում պետությունների տնտեսական ինքնիշխանությանն ու ռիսկեր են առաջացնում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և հարկերից խուսափելու առումով: Հետևաբար՝ նա ընդգծում է կրիպտոակտիվների ոլորտում միասնական իրավական կարգավորումների անհրաժեշտությունը, որոնք կարող են կարևոր դեր խաղալ այդ ռիսկերը նվազեցնելու հարցում:

Ատենախոսության գիտագործնական նշանակությունը: Աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտությունը արդի գլոբալիզացիայի պայմաններում համաշխարհային տնտեսական հարաբերություններում տեղի ունեցող փոփոխությունների և ինտեգրացիոն գործընթացների համատեքստում կնպաստի պետությունների տնտեսական ինքնիշխանությանն առնչվող խնդիրների բացահայտման, վերլուծության և լուծումներ գտնելուն ուղղված գիտական ավելի խորը ուսումնասիրություններին, կիստակեցնի իրավական կարգավորման հարցադրումների շրջա-

նակը և կբացահայտի ու կկանխորոշի դրանց զարգացման հետագա ուղիները:

Աշխատանքի տեսական նշանակությունը առանձնանում է պետությունների տնտեսական ինքնիշխանության էական տարրերի բաղդատման և դրանց մեկ ուսումնասիրությամբ ամփոփելու նպատակադրմամբ:

Տնտեսական ինքնիշխանության վրա ժամանակակից բլոկչեյն տեխնոլոգիաների և կրիպտոարժույթների ազդեցության ուսումնասիրությունը գործնականում կարող է օգտակար լինել կրիպտոակտիվների միջոցով իրականացվող գործարքների ռիսկերը գնահատելու, ինչպես նաև դրանց չեզոքացմանն ուղղված իրավական ակտերի մշակման համար:

Ատենախոսությունում արտացոլված առանձին տեսակետներ կարող են պիտանի լինել պետական համապատասխան մարմինների համար՝ պետության տնտեսական ինքնիշխանությանը վերաբերող տարատեսակ հարցերի առնչությամբ ունեցած գիտագործնական քննարկումների շրջանակներում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Աշխատանքը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի կողմից: Ատենախոսության հիմնադրույթները զեկուցվել են տարբեր գիտաժողովներում և հրատարակվել են գիտական տարբեր հանդեսներում՝ որպես հոդվածներ:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, ինչը ենթագլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության առաջին՝ «Պետությունների ինքնիշխանությունն արդի գլոբալացման պայմաններում» գլխում ժամանակակից գլոբալիզացիոն գործընթացների լույսի ներքո ներկայացվել է առհասարակ պետության ինքնիշխանությանը վերաբերող առանցքային տեսակետները, պատմական ակնարկ կատարելով՝ փորձ է կատարվել համեմատություն անցկացնել ինքնիշխանության ավանդական և ժամանակակից պատկերացումների միջև:

Ատենախոսության երկրորդ՝ «Պետությունների տնտեսական ինքնիշխանության բաղադրատարրերը» գլխում ուսումնասիրվել են պետությունների տնտեսական ինքնիշխանության այնպիսի կարևորագույն տարրեր, ինչպիսիք են բնական ռեսուրսների նկատմամբ պետությունների մշտական ինքնիշխանության սկզբունքը, օտարերկրյա ներդրումների ոլորտում

պետությունների ինքնիշխանությունը, ինչպես նաև պետությունների մաքսային ինքնիշխանությունը:

Ատենախոսության երրորդ՝ «Պետությունների ֆիսկալ և ֆինանսաարժութային ինքնիշխանությունը» գլուխը նվիրված է պետության ինքնիշխանությանը հարկային և ֆիսկալ ոլորտներում, հետազոտվել է ժամանակակից տեխնոլոգիաների ազդեցությունը պետությունների ֆիսկալ ինքնիշխանության վրա: Այս գլխի շրջանակներում ուսումնասիրվել են նաև պետությունների արժութայի ինքնիշխանությունը, ինչպես նաև կրիպտոարժույթների ազդեցությունը պետությունների տնտեսական ինքնիշխանության վրա:

Ատենախոսության ընդհանուր ծավալը 191 էջ է:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, ատենախոսության աղբյուրագիտական և մեթոդաբանական հիմքը, գիտական նորույթը, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, կառուցվածքը, ինչպես նաև պաշտպանության ներկայացվող դրույթները:

Աշխատանքի **առաջին գլուխը** («Պետությունների ինքնիշխանությունն արդի գլոբալացման պայմաններում») բաղկացած է 2 պարագրաֆից:

Առաջին պարագրաֆը («Պետությունների ինքնիշխանության էությունը և առանձնահատկությունները միջազգային տնտեսական ինտեգրացիոն գործընթացների լույսի ներքո») նվիրված է պետության ինքնիշխանության հասկացությանն ու էությանը ժամանակակից ինգետրացիոն գործընթացների լույսի ներքո: Պարագրաֆում ներկայացված են պետության ինքնիշխանության պատմական զարգացումը, պատմական տարբեր ժամանակահատվածներում ինքնիշխանության հայեցակարգի փոփոխություններն ու զարգացումները: Անդրադարձ է կատավել նաև պետության ինքնիշխանության ժամանակակից մարտահրավերներին, և առանձնակի ուշադրություն է դարձվել Եվրոպական Միությանը՝ պետության ինքնիշխանության ժամանակակից հայեցակարգի համատեքստում: Պարագրաֆում նշվում է, որ կա էական տարբերություն ինքնիշխանության և ինքնիշխան իրավազորությունների միջև: Մասնավորապես ընդգծվում է, որ ինք-

նիշխան իրավազորությունները կարող են դելեգացվել վերպետական կառույցների, մինչդեռ, ինքնիշխանությունն ինքնին չի կարող զիջվել: Այս պնդումը հիմնավորելու համար պարագրաֆում հղում է կատարվում դատական որոշումների, ինչպես նաև տեսական որոշ աղբյուրների:

Երկրորդ պարագրաֆը («Պետությունների տնտեսական ինքնիշխանությունը») նվիրված է պետությունների ինքնիշխանության կարևորագույն դրսևորումներից մեկին՝ տնտեսական ինքնիշխանությանը: Պարագրաֆում ներկայացված է, թե ինչպիսի ազդեցություն ունեն ներկայիս գլոբալիզացիոն գործընթացները պետությունների տնտեսական հարաբերությունների վրա, և այդչափ բազմաշերտ հարաբերությունները ինչպես կարող են ազդել պետությունների տնտեսական ինքնիշխանության վրա: Այդ գլոբալիզացիոն գործընթացները միշտ չէ, որ հանգեցնում են միասնական տնտեսական, քաղաքական և իրավական համակարգերի ձևավորմանը: Ընդհակառակը՝ այս գործընթացները հաճախ տանում են բևեռացումների, ինչի արդյունքն է ռեգիոնալիզմը և տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացները: Արդյունքում՝ ստեղծվում են բազմաթիվ և բազմաշերտ իրավական, քաղաքական և տնտեսական համակարգեր, որպիսի պայմաններում պետությունների համար էլ ավելի է կարևորվում տնտեսական ինքնիշխանության պահպանման գաղափարը:

Միչև տնտեսական ինքնիշխանության առանձին բաղադրատարրերին անդրադառնալը երկրորդ պարագրաֆում ներկայացված է տնտեսական ինքնիշխանության հասկացությունը և բովանդակությունը, առանձնակի անդրադարձ է կատարվել տնտեսական ինքնիշխանության դրսևորման արտաքին և ներքին ձևերին: Տնտեսական ինքնիշխանության արտաքին ասպեկտի ներքո անհրաժեշտ է հասկանալ մի կողմից՝ պետության իրավունքը՝ ստանալու հավասար օգուտ միջազգային տնտեսական կյանքին մասնակցելու միջոցով, իսկ մյուս կողմից՝ պետության իրավունքը՝ հավասար մասնակցելու միջազգային տնտեսական խնդիրների լուծմանը:

Դժվար է պատկերացնել տնտեսական ինքնիշխանության իրացում առանց միջազգային-իրավական կարգավորումների և այդ իրավազորությունների իրացումն ապահովող սկզբունքների: Այս սկզբունքներն են՝ ազգային ռեժիմի, փոխշահավետության և առավել բարենպաստման ռեժիմի սկզբունքները, որոնց անդրադարձ է կատարվել նույն պարագրաֆում:

Աշխատանքի **երկրորդ գլուխը** («Պետությունների տնտեսական ինքնիշխանության բաղադրատարրերը») բաղկացած է 4 պարագրաֆից:

Առաջին պարագրաֆում («Բնական ռեսուրսների նկատմամբ պետությունների մշտական ինքնիշխանությունը») ներկայացվում է տնտեսական ինքնիշխանության սկզբունքի անկյունաքարերից մեկը՝ բնական ռեսուրսների նկատմամբ պետությունների մշտական ինքնիշխանությունը, որն ամրագրվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի մի շարք բանաձևերում, ինչպես նաև միջազգային պայմանագրերում, ինչպիսիք են 1974 թ. Պետությունների տնտեսական իրավունքների և պարտականությունների խարտիան, Մարդու և ժողովուրդների իրավունքների Աֆրիկյան խարտիան, Շրջակա միջավայրի և զարգացման մասին Ռիոյի 1992 թ. հռչակագիրը և այլն: Թեև որոշ հեղինակներ հարցականի տակ են դնում սկզբունքի իրավական պարտադիր բնույթը՝ հղում կատարելով ՄԱԿ-ի ԳԱ բանաձևերի իրավաբանական ուժին, պարագրաֆում վերահաստատվում է այն փաստը, որ մշտական ինքնիշխանության սկզունքը միջազգային սովորութային իրավունքի մաս է, ինչի մասին վկայում են միջազգային տարբեր դատական գործեր, զոր օրինակ՝ Արդարադատության միջազգային դատարանի (ICJ) *Կոնգոն ընդդեմ Ուգանդայի* գործը:

Չնայած բնական ռեսուրսների նկատմամբ պետությունների մշտական ինքնիշխանության սկզբունքի կարևորությանը՝ միջազգային իրավունքում դեռևս չկա սկզբունքի միասնական սահմանում: Հստակ սահմանված չէ նաև, թե որ օբյեկտների նկատմամբ է տարածվում այս սկզբունքը: Աշխատանքում կարևորվում է արգենտինացի իրավաբան Կանոյի կողմից բնական ռեսուրսների համապարփակ սահմանումը, որը, ըստ ատենախոսի, կարելի է ընդգրկել ոլորտին առնչվող միջազգային-իրավական փաստաթղթերում:

Ի տարբերություն բնական ռեսուրսների նկատմամբ մշտական ինքնիշխանության իրավունքի սահմանման բացակայության՝ առավել հստակ են մշտական ինքնիշխանության իրավունքի իրացման դրսևորման ձևերը, ինչպես նաև իրավունքների իրացման սահմանափակումները, որոնք ներկայացված են պարագրաֆում:

Երկրորդ պարագրաֆում («Պետությունների ինքնիշխանությունը օտարերկրյա ներդրումների ոլորտում») հեղինակը վերլուծության է ենթարկել օտարերկրյա ներդրումների ոլորտում պետության ինքնիշխան իրավազորությունների շրջանակները: Կալվոյի դոկտրինի ի հայտ գալուց ի վեր սրընթաց զարգացումներ են տեղի ունեցել միջազգային ներդրումա-

յին իրավունքի ոլորտում, ինչի արդյունքն էր Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի (ICSID) ստեղծումը, որով էապես բարելավվեցին օտարերկրյա ներդրողների պաշտպանության մեխանիզմները:

Օտարերկրյա ներդրումների ոլորտում պետության իրավազորությունների շրջանակներում պետությունը սահմանում է ներդրումային իր ներքին քաղաքականությունը՝ ընդունելով համապատասխան օրենքներ և կարգավորումներ, ինչպես նաև իրավունք ունի սահմանափակումներ դնել իր տարածքում օտարերկրյա ներդրումների նկատմամբ: Մինչդեռ, օտարերկրյա ներդրումների ոլորտում պետությունների ինքնիշխան իրավազորությունների իրացումը սահմանափակված է որոշակի սկզբունքներով և մեխանիզմներով, ինչպիսիք են օտարերկրյա ներդրողների միջազգային-իրավական ավելի արդյունավետ պաշտպանության մեխանիզմները, երկկողմ ներդրումային պայմանագրերով (BIT) սահմանվող միջոցները, օտարերկրյա ներդրողների նկատմամբ արդար և անաչառ վերաբերմունքի չափորոշիչը (Fair Equitable Standard), օտարերկրյա սեփականության նկատմամբ արդար և անաչառ վերաբերմունքի սկզբունքը: Վերջինիս չափորոշիչը օտարերկրյա ներդրումների ոլորտում կարևորագույն սկզբունքներից մեկը, որի հինգ էական տարրերը (պաշտպանելու պարտականություն, պատշաճ ընթացակարգ (due process), թափանցիկություն, բարեխղճություն, ազնվություն և անաչառություն) ներկայացված են պարագրաֆում:

Երկրորդ պարագրաֆում («Ազգայնացման և սեփականազրկման պետությունների իրավունքը») ուսումնասիրվել է պետությունների տնտեսական ինքնիշխանության ոլորտում ամենազգայուն թեմաներից մեկը՝ ազգայնացման և սեփականազրկման (nationalization and expropriation) իրավունքը: Միջազգային իրավունքում հատկապես խնդրահարույց է անուղղակի սեփականազրկման որակավորման հարցերը: Անուղղակի սեփականազրկման դեպքերին անդրադարձող մի շարք արբիտրաժային որոշումների ուսումնասիրության հիման վրա պարագրաֆում առանձնացվել են անուղղակի սեփականազրկման կամ հավասարազոր միջոցների հետևյալ մեթոդները/եղանակները. ա) ներդրողի սեփականությունը յուրացնելը, որը արժեզրկում է կառավարող ընկերության պայմանագրերը, բ) հարկերի բարձրացում այնքանով, որ ներդրումը դառնա տնտեսապես ոչ կայուն, գ) ներդրման մեջ էական դեր ունեցող անձի հեռացում, դ) որոշ թույլտվությունների մերժում՝ չնայած նախապես տրված խոստումներին, ե) արդեն իսկ տրամադրված լիցենզիայի չեղարկում:

Սեփականազրկումը, ինչպես պետությունների տնտեսական ինքնիշխանության իրացման այլ դրսևորումներ, հնարավոր է որոշակի պայմանների առկայության դեպքում: Այլապես սեփականազրկումը կարող է համարվել ոչ իրավաչափ, ինչի համար պետությունները կարող է ենթարկվել միջազգային-իրավական պատասխանատվության: Պարագրաֆում առանձնակի անդրադարձ է կատարվում նաև սեփականազրկում իրականացնելու ինքնիշխանությունը սահմանափակող գործիքներին, ինչպիսին են կայունացնող դրույթները (Stabilisation Clause), որոնց իրավաբանական ուժը հեղինակը կասկածի տակ է դնում:

Չորրորդ պարագրաֆում («Պետությունների մաքսային ինքնիշխանությունը») ուսումնասիրվել են պետությունների մաքսային ինքնիշխանությունը, դրա արտաքին և ներքին դրսևորումները: Ժամանակակից ինտեգրացիոն գործընթացների համատեքստում էլ ավելի է կարևորվում մաքսային ոլորտում պետությունների իրավազորություններին առնչվող հիմնախնդիրները: Դառնալով ինտեգրացիոն միավորման մաս՝ պետությունները հաճախ ստիպված են լինում զիջել մաքսային ոլորտում ինքնիշխան իրավազորությունների մի մասը, սահմանել փոխհամաձայնեցված սակագներ միության անդամ այլ երկրների հետ և այլն: Կախված ինքնիշխան իրավազորությունների զիջման չափից՝ հեղինակը սահմանել է հետևյալ ինտեգրացիոն հինգ մակարդակները՝ ա) ազատ առևտրի համաձայնագիր (FTA), բ) մաքսային միություն, գ) ընդհանուր շուկա, դ) արժութային միություն, ե) տնտեսական միություն:

Առանձնակի ուշադրության է արժանի մի քանի միության իրավական ռեժիմների փոխհարաբերակցության հարցը: Ատենախոսը այս խնդրին անդրադարձել է կատարում Եվրասիական տնտեսական միության և Առևտրի համաշխարհային կազմակերպության իրավական ռեժիմների փոխհարաբերակցության լույսի ներքո՝ նշելով, որ թեպետ առկա են տարաբնույթ մեկնաբանություններ այս իրավական ռեժիմների փոխհարաբերակցության վերաբերյալ, այնուամենայնիվ, ԱՀԿ ռեժիմն ունի գերակա բնույթ:

Աշխատանքի **երրորդ գլուխը** («Պետությունների ֆիսկալ և ֆինանսաարժութային ինքնիշխանությունը») բաղկացած է 3 պարագրաֆից:

Առաջին պարագրաֆում («Պետությունների ֆիսկալ ինքնիշխանությունը») ներկայացվում է ֆինանսատնտեսական ինքնիշխանության մասը կազմող մյուս կարևորագույն բաղադրատարրերից մեկը՝ ֆիսկալ ինքնիշխանությունը: Ժամանակակից գլոբալիզացման գործընթացների համա-

տեքստում պետությունների համար էլ ավելի կարևոր է դառնում ճկուն և արդյունավետ ֆիսկալ քաղաքականության իրականացումը: Միջազգային իրավունքի շրջանակներում պետություններն այդպիսի քաղաքականություն իրականացնում են տարատեսակ միջազգային պայմանագրերի կնքման կամ անդամակցության եղանակով: Այս ոլորտում միջազգային տարածված պայմանագրերից են կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերը, ինչը խթանում է համաձայնագրի կողմ երկրների միջև տնտեսական հարաբերությունների զարգացումը:

Ժամանակակից աշխարհում ֆիսկալ ոլորտում լուրջ խնդիր է հարկային մրցակցությունը: Շատ երկրներ փորձում են, բարենպաստ հարկային միջավայր ձևավորելով, դեպի սեփական իրավազորություն գրավել այլ երկրներում գործող կամ նոր ստեղծվելիք բիզնեսներ: Մինչդեռ որոշ երկրներ, չարաշահելով հարկային բարեխիղճ մրցակցությունը, ստեղծում են «հարկային դրախտներ», ինչը որոշ տնտեսվարող սուբյեկտների հնարավորություն է տալիս խուսափելու հարկերից:

Այսպիսով, որոշ պետությունների կողմից ինքնիշխանության չարաշահումը հարկային անարդար ռեժիմների միջոցով հանգեցնում է այլ պետությունների հարկային ինքնիշխանության խախտման, ինչի դեմ անհրաժեշտ է մշակել համապարփակ միջազգային-իրավական կարգավորումներ:

Պարագրաֆում անդրադարձ է կատարվել նաև թվային գործիքների միջոցով հարկերից խուսափելուն առնչվող խնդիրներին: Ժամանակակից աշխարհում համացանցը հնարավորություն է տալիս ընկերություններին առցանց առևտրի միջոցով շրջանցել որոշակի հարկային պարտավորությունների կատարումը՝ «մշտական հաստատություն» ստեղծելուց խուսափելու միջոցով: Այս համատեքստում աշխատանքում առանձնակի կարևորվում է BEPS ծրագրի շրջանակներում 2017 թվականի հունիսի 7-ին Փարիզում ընդունված հարկային ոլորտը կարգավորող առաջին միջազգային բազմակողմ պայմանագիրը՝ «Հարկային բազայի խեղաթյուրումը և շահույթի տեղաշարժը կանխելու մասին հարկային պայմանագրերի կիրարկումն ապահովելու մասին բազմակողմ պայմանագիրը»:

Երկրորդ պարագրաֆում («Պետությունների արժութային ինքնիշխանությունը») ներկայացվում է արժութային ինքնիշխանության էությունն ու բովանդակությունը ժամանակակից տնտեսական հարաբերությունների լույսի ներքո: Թեպետ ներկայիս աշխարհում շատ են տնտեսական և իրավական սահմանափակումները, որոնք ուղղակիորեն ազդում են պետութ-

յունների արժութային ինքնիշխանությունից բխող իրավազորությունների վրա, այնուամենայնիվ հեղինակը նշում է, որ պետությանն է պատկանում այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են արժույթ թողարկելու, այդ արժույթի արժեքը որոշելու, իր տարածքում արժույթի օգտագործման շրջանակներ սահմանելու իրավազորությունները:

Չնայած այն թյուրընկալումներին, որ տնտեսական միությունը ենթադրում է նաև արժութային միության առկայություն, իսկ արժութային միությունը՝ միասնական արժույթ ունենալու գաղափարը, հեղինակը նշում է, որ տնտեսական միությունն ինքնին չի ենթադրում արժութային միություն, և այդտեղ միասնական արժույթ ունենալը պարտադիր պայման չէ:

Երրորդ պարագրաֆում («Կրիպտոարժույթների մարտահրավերները պետությունների ինքնիշխանության համատեքստում») հեղինակը ներկայացնում է պետական ինքնիշխանության ոլորտում կրիպտոարժույթների մարտահրավերները: Պարագրաֆում պարզաբանվում է, թե ինչպես են գործում կրիպտոարժույթները՝ ընդգծելու համար դրանց տեխնոլոգիաների հիմնական հատկությունները: Նա վեր է հանում կրիպտոարժույթների հետ կապված ռիսկերը և կարևորում է միջազգային կարգավորումների անհրաժեշտությունը կրիպտոարժույթների վերաբերյալ: Պարագրաֆում հատուկ ուշադրություն է դարձվում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարին վերաբերող կարգավորումներին, ինչպես նաև հարկերից խուսափելու դեմ ուղղված կարգավորումներին: Անդրադարձ է կատարվել նաև այլընտրանքային վեճերի լուծման (արբիտրաժ) ոլորտում կրիպտոարժութային տեխնոլոգիաներից բխող հարցերին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող գլոբալիզացիոն գործընթացները էապես փոխել են պետությունների ինքնիշխանության մասին ավանդական պատկերացումները: Այդ փոփոխություններն էլ ավելի արդիական են դարձնում հարցն առ այն, թե որքանով են փոխվում պետությունների ինքնիշխանության էությունը և դերը գլոբալիզացիոն գործընթացների ազդեցության արդյունքում: Չնայած նմանատիպ հարցադրումներին, այնուամենայնիվ պետք է փաստել, որ ինքնիշխանությունը մնում է պետության ամենաէական տարրերից մեկը, ինչն արտահայտվում է սեփական տարածքում պետության գերակայությամբ և այլ սուբյեկտնե-

րից անկախությամբ: Պետությունն իր ինքնիշխանության ուժով շարունակում է հանդես գալ որպես միջազգային իրավունքի հիմնական սուբյեկտ:

2. Միևնույն ժամանակ, պետությունների ինքնիշխանությունը բացարձակ բնույթ չի կրում: Մասնավորապես, ինտեգրացիոն գործընթացների համատեքստում պետությունները, ներգրավվելով բազմաշերտ միազգային հարաբերություններում, շատ դեպքերում զիջում և այդպիսով սահմանափակում են որոշ ինքնիշխան իրավազորություններ: Այստեղ պետք է հստակ տարանջատում դնել «ինքնիշխանություն» և «իրավազորություն» կամ «իրավասություն» հասկացությունների միջև, քանզի պետությունը կարող է զիջել կամ դելեգացնել իր ինքնիշխան իրավազորությունների մի մասը, սակայն չի կարող զիջել ինքնին ինքնիշխանությունը:

3. Ժամանակակից աշխարհում տնտեսական ինքնիշխանության ուսումնասիրությունները հանգեցնում են տեսագործնական մի շարք եզրահանգումների: Ներկայիս աշխարհաքաղաքական գործընթացների համատեքստում էլ ավելի է սրվում վերպետական կառույցների, գլոբալ տնտեսական համակարգի ձևավորման ու միևնույն ժամանակ պետության տնտեսական ինքնիշխանությունից բխող իրավազորությունների պահպանման հարցը: Պետությունները ստիպված են հավասարակշռված քաղաքականություն վարել միջազգային տնտեսական հարաբերությունների ոլորտում, քանզի տնտեսական մեկուսացումը կարող է պետությանը հետ պահել իր բնականոն զարգացման ուղուց և ունենալ բավականին ծանր հետևանքներ: Հետևաբար՝ մեկուսացումից խուսափելու համար պետությունները ստիպված են իրենց տնտեսական կարգը հարմարեցնել ինտեգրացիոն գործընթացներին:

4. Գլոբալիզացիոն գործընթացները և դրանց շրջանակներում էլ ավելի բազմաշերտ դարձող ինտեգրացիոն գործընթացները ավելի արդիական են դարձնում պետությունների տնտեսական ինքնիշխանությանն առնչվող հիմնահարցերը: Միջազգային տնտեսական ինտեգրացիոն գործընթացներն այլևս դարձել են միջազգային հարաբերությունների կարևորագույն բաղադրիչներից մեկը, ինչն էլ փաստում են ներկայումս աշխարհում գործող երեք հարյուրից ավելի տարածաշրջանային տնտեսական համաձայնությունները: Միևնույն ժամանակ, գլոբալիզացիոն գործընթացներն ինքնին երաշխիք չդարձան ընդհանուր տնտեսական մշակույթի ձևավորման համար, իսկ սա իր հերթին կարևոր պատճառներից մեկը հանդիսացավ տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն գործընթացների և ռեգիոնալացման համար:

5. Առևտրի և սակագների ընդհանուր համաձայնգիրը (GATT), լինելով միջազգային առևտուրը կարգավորող առաջին բազմակողմ պայմանագիրը, կարևոր ցուցիչ դարձավ միջազգային տնտեսական իրավունքում: Միջազգային տնտեսական հարաբերությունների կարգավորման համար ընդունվեցին իրավական մի շարք մեխանիզմներ, որոնք, չնայած իրենց ոչ պարտադիր բնույթին, մեծ նշանակություն ունեցան ոլորտի զարգացման համար: Այս մեխանիզմներից են 1970 թ. Միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրիրը, 1974 թ. Պետությունների տնտեսական իրավունքների և պարտավորությունների խարտիան և Նոր միջազգային տնտեսական կարգի սահմանման մասին հռչակագիրը:

6. Միջազգային տնտեսական կյանքին պետության իրավահավասար մասնակցության իրավունքը տնտեսական ինքնիշխանության սկզբունքի խնդրահարույց հարցերից է, քանզի տնտեսապես թույլ պետություններին հաճախ հնարավորություն չի տրվում մասնակցելու այնպիսի խնդիրների լուծմանը, որոնք առնչվում են իրենց շահերին:

7. Պետության տնտեսական ինքնիշխանություն ասելով նախևառաջ պետք է նկատի ունենալ սեփական ռեսուրսները, հարստությունը և ամբողջ տնտեսական գործունեությունը ազատորեն տնօրինելու և իրավահավասար հիմունքներով միջազգային տնտեսական հարաբերություններին մասնակցելու պետության իրավունքները:

8. Կարելի է պնդել, որ ինքնիշխան տնտեսության առկայության մասին վկայում են մի շարք էական գործոններ. ա) ֆինանսական ինքնուրույնություն, բ) պարենային ինքնաբավություն, գ) մտավոր (ինտելեկտուալ) ինքնաբավություն, դ) տեխնոլոգիական ինքնուրույնություն, ե) ժողովրդագրական կայունություն:

9. Պետությունների տնտեսական ինքնիշխանության հիմնական բաղադրատարրերը ներառում են միջազգային սովորութային իրավունքի մասը կազմող բնական ռեսուրսների նկատմամբ մշտական ինքնիշխանությունը, օտարերկրյա ներդրումների ոլորտում պետությունների ինքնիշխանությունը, պետությունների մաքսային և ֆիսկալ ինքնիշխանությունը: Պետությունների ֆինանսական ինքնիշխանության էական տարրերից է նրանց արժութային ինքնիշխանությունը:

10. Պետությունների տնտեսական ինքնիշխանության անկյունաքարային տարրերից է բնական ռեսուրսների նկատմամբ պետությունների մշտական ինքնիշխանության սկզբունքը, և այս սկզբունքից բխող իրավասությունների արդյունավետ իրացումը էական նշանակություն ունի

պետությունների համար: Միևնույն ժամանակ, այս իրավասությունները բացարձակ բնույթ չեն կրում և պետություններն ունեն որոշակի պարտականություններ նշյալ սկզբունքի համատեքստում:

11. Թեպետ միջազգային իրավունքում դեռևս չկա բնական ռեսուրսների միասնական իրավական սահմանում, սակայն փոքրիշատե ընդունված մոտեցման համաձայն՝ բնական ռեսուրսների նկատմամբ մշտական ինքնիշխանությունը վերաբերում է պետության տարածքում ոչ մարդակերտ բոլոր ռեսուրսներին:

12. Տնտեսական ինքնիշխանության իրացման կարևորագույն դրսևորումներից են օտարերկրյա ներդրումների ոլորտում պետական միջամտության լիազորությունները: Տնտեսական ինքնիշխանությունը պահպանելու նկատառումներից ելնելով՝ պետությունները ներդրումների ոլորտում պետք է վարեն հավասարակշռված քաղաքականություն: Միևնույն ժամանակ, օտարերկրյա ներդրումների ոլորտում պետական միջամտության լիազորությունները սահմանափակված են միջազգային իրավական այնպիսի մեխանիզմներով, ինչպիսիք են ներդրումային երկկողմ համաձայնագրերը և միջազգային ներդրումային պայմանագրերը:

13. Չնայած օտարերկրյա ներդրումների ոլորտում պետական միջամտության լիազորությունների միջազգային իրական սահմանափակումներին՝ պետություններն իրավունք ունեն որոշակի դեպքերում խախտել պայմանագրով ստանձնած պարտավորությունները: Սեփականազրկումն (expropriation) այն դասական օրինակներից է, երբ պետությունը խախտում է օտարերկրյա ներդրողի հետ կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

14. Սեփականազրկմանն առնչվող վեճերի դեպքում առավելապես խնդիրներ են առաջանում ենթադրյալ անուղղակի սեփականազրկման գործեր քննելիս, քանզի չկան անուղղակի սեփականազրկմանն առնչվող միասնական ստանդարտներ:

15. Թեպետ սեփականազրկման իրավունքը պետության տնտեսական ինքնիշխանության դրսևորումներից է, այն չի կրում բացարձակ բնույթ, ինչը նշանակում է, որ սեփականազրկումը կարող է համարվել իրավաչափ միայն որոշակի պայմանների առկայության դեպքում: Միևնույն ժամանակ, կան որոշակի դեպքեր (օրինակ՝ Police powers), երբ սեփականազրկման հետ նույնականացվող գործողությունները պետության համար չեն առաջացնում փոխհատուցում տրամադրելու պարտավորություն:

16. Միջազգային ներդրումային իրավունքին հայտնի են պետության՝ սեփականազրկում իրականացնելու ինքնիշխանությունը սահմանափակող գործիքներ, որոնցից կարելի է առանձնացնել կայունացնող դրույթները (stabilisation clauses): Սակայն հարկ է փաստել, որ այս դրույթների իրավաբանական ուժի վերաբերյալ չկա միասնական մոտեցում:

17. Պետությունների տնտեսական ինքնիշխանության կարևոր բաղադրատարրերից է նրանց ֆիսկալ ինքնիշխանությունը: Միևնույն ժամանակ, թեպետ ֆիսկալ ինքնիշխանությունը պետության տնտեսական ինքնիշխանության էական բաղադրատարրերից է, այն չի կրում բացարձակ բնույթ և անուղղակիորեն սահմանափակված է մասնավորապես մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերով. տվյալ դեպքում՝ սեփականության իրավունքով:

18. Երկկողմ հարկային պայմանագրերի ավելի քան մեկ դար առկայությունը փաստում է միջազգային հարկերի ոլորտում խնդիրների լուծման երկարաժամկետ և միակողմանի ջանքերի մասին: Խնդրի բազմակողմ մոտեցման արգասիքներից է Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպությունը, որը ներկայումս միջազգային հարկային խնդիրների համակարգման հիմնական հարթակ է: Միևնույն ժամանակ, քանի որ այլ երկրների ֆիսկալ ինքնիշխանությանը սպառնացող անարդար հարկային քաղաքականություններն ավելի հաճախ իրականացվում են ՏՀԶԿ ոչ անդամ պետությունների կողմից, պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնել այդ պետությունների հետ համագործակցությանը:

19. Թեև տնտեսական և իրավական տարբեր սահմանափակումների պատճառով քայքայվել են արժութային ինքնիշխանությանից բխող որոշ իրավասություններ, սակայն արժութային ինքնիշխանությունն ինքնին չի վերացել: Պետությունը բացառիկ իրավունք ունի արժույթ թողարկելու իր տարածքում, որոշելու այդ արժույթի արժեքը: Սակայն արժույթի արժեքի սահմանումը ենթակա է մի շարք սահմանափակումների:

20. Ժամանակակից արժութային ինքնիշխանության իրացումը հիմնվում է ֆինանսական համակարգի ամբողջականության պահպանման, ինչպես նաև ֆինանսական և արժութային կայունության խթանման կարևորագույն արժեքների վրա: Սա հաշվի առնելով՝ արժութային ինքնիշխանության հայեցակարգը հարմարեցվում է և պետք է հարմարեցվի շարունակաբար փոփոխվող տնտեսական միջավայրին:

21. Բլոկչեյն տեխնոլոգիաները գնալով ավելի մեծ ազդեցություն են ունենալու պետությունների ֆինանսատնտեսական ինքնիշխանության վրա: Կրիպտոարժույթների միջոցով կատարվող գործարքները չեն վերահսկվում պետությունների և ֆինանսական հաստատությունների կողմից, կատարվող գործարքների կողմերը մնում են անանուն, ինչը հավելյալ ռիսկեր է առաջացնում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում: Ավելին՝ կրիպտոարժույթները նաև օգտագործվում է հարկերից խուսափելու նպատակով: Հետևաբար՝ կրիպտոարժույների ոլորտում միջազգային կարգավորումները գնալով էլ ավելի են արդիական դառնում ժամանակակից աշխարհում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝

1. Պետությունների ինքնիշխանությունը ժամանակակից գլոբալիզացման պայմաններում. «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու», Երևան, 2019, 2(2) 2018, էջ 405-418:
2. Պետությունների տնտեսական ինքնիշխանությունը. «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2019, № 2 (29), էջ 70-83:
3. Միջազգային տնտեսական ինտեգրացիոն հարաբերությունների միջազգային-իրավական հիմքերը. «Պետություն և իրավունք», 2019, № 2-3 (84-85), էջ 126-134:
4. Պետությունների ֆիսկալ ինքնիշխանությունը. «Այլընտրանք ե-ռամսյա գիտական հանդես», հուլիս-սեպտեմբեր, 2019, էջ 202-210:
5. Ազգայնացում և սեփականազրկում. պետությունների իրավունքը. «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2020 № 1 (31), էջ 62-73:
6. Պետությունների ինքնիշխանությունը օտարերկրյա ներդրումների ոլորտում, «Դատական իշխանություն», Երևան, հունվար-փետրվար 2020 1-2, էջ 111-124:

Григор Арменович Чобанян

ЭКОНОМИЧЕСКИЙ СУВЕРЕНИТЕТ ГОСУДАРСТВ В КОНТЕКСТЕ МЕЖДУНАРОДНОГО ПРАВА

Концепция государственного суверенитета развивалась в течение истории. В современном мире процессы глобализации и интеграции чрезвычайно изменили и развили международные экономические отношения, что, в свою очередь, изменило концепцию экономического суверенитета государств.

В настоящем работе излагает всесторонний и глубокий анализ следующих основных элементов современного экономического суверенитета государств: а) постоянный суверенитет над природными богатствами и ресурсами, б) государственный суверенитет в области иностранных инвестиций, в) таможенный суверенитет, г) фискальный суверенитет и е) валютный суверенитет. Обсуждая наиболее проблемные аспекты этих элементов экономического суверенитета, работа также затрагивает рамки международно-правовых инструментов, ограничивающих дискреционное осуществление суверенитета экономического государства.

В рамках исследования особое внимание уделяется анализу правового содержания международных прав и обязательств государств в рамках основных элементов экономического суверенитета, а также характера юридической силы этих прав и обязанностей, предусмотренных в международное право.

Несмотря на то, что некоторые авторы предсказывают коррозию государственного экономического суверенитета, в этой работе указывается, что следует проводить определенное различие между понятиями суверенитета и суверенных полномочий. Суверенные полномочия могут быть ущемлены, однако сам суверенитет не может.

Было установлено, что глобализация не всегда приводила к появлению единых экономических, политических и правовых систем. В результате государствам становится все труднее защищать экономический суверенитет в рамках различных правовых систем в рамках различных экономических союзов.

Работа подчеркивает важность принципа постоянного суверенитета над природными богатствами и ресурсами, утверждая, что этот принцип является частью обычного международного права. Между тем не существует единого подхода к определению принципа в целом и понятиям природных богатств и ресурсов в частности. Поэтому автор предлагает принять единообразное определение принципа в международно-правовых документах.

Диссертация также касается суверенитета государства в области международных инвестиций. Указывая на права государств, вытекающие из экономического суверенитета государства в отношении иностранных инвестиций, автор также рассмотрел ограничения по международному инвестиционному праву, которые ограничивают дискриминационные действия государств в отношении иностранных инвестиций.

Особое внимание уделено анализу влияния современных технологий на экономический суверенитет государств. Международное налогообложение транснациональных корпораций, ведущих бизнес в виртуальной сфере, является одним из вопросов, касающихся фискального суверенитета государств. Криптовалюты также повлияли на экономический суверенитет государств таким образом, что незаконным пользователям проще совершать транзакции с помощью криптовалют. Таким образом, финансирование терроризма, отмывание денег и уклонение от уплаты налогов - это те риски, которые были бы адекватно устранены путем регулирования транзакций с помощью криптовалют.

Основные положения диссертации были отражены в научных статьях, опубликованных автором, и были представлены на заседаниях кафедры Европейского и международного права юридического факультета Ереванского государственного университета.

Grigor Chobanyan

THE ECONOMIC SOVEREIGNTY OF STATES IN THE CONTEXT OF INTERNATIONAL LAW

The concept of state sovereignty has evolved during the history. In the modern world, globalization and integration processes have immensely changed and developed international economic relations, which in its turn modified the concept of economic sovereignty of states.

Current thesis sets out to conduct a comprehensive and deep analysis of the following main elements of the contemporary economic sovereignty of states: a) permanent sovereignty over natural wealth and resources, b) state sovereignty in the field of foreign investments, c) customs sovereignty, d) fiscal sovereignty, and e) monetary sovereignty. Through thorough discussion of the most problematic aspects of the above-mentioned main elements of economic sovereignty, the thesis also addresses the framework of available international legal instruments, which aim to restrict the discretionary execution of economic state sovereignty by states.

Within the framework of the research, a particular attention is paid to the analysis of the content of the international righs and obligation of states within the scope of elements of economic sovereignty, as well as to the nature of the legal force of those rights and obligations under international law.

Despite some authors are predicting the corrosion of the concept of economic sovereignty of states, this thesis identifies the necessity to make certain distinction between the notions of "sovereignty" and "sovereign powers". Sovereign powers may be delegated, nevertheless, overall sovereignty by itself may not.

It is stated that globalization did not always lead to the emergence of uniform economic, political and legal systems. As a result, it is being more and more challenging for states to protect their economic sovereignty within the frameworks of various legal systems and economic unions.

The thesis underlines the significance of the principle of permanent sovereignty over natural wealth and resources by claiming that the principle is a part of the customary international law. Meanwhile, there is no uniform approach on the definition of the principle generally and the notion of natural

wealth and resources particularly. Therefore, the author suggests the adoption of uniform definition of the principle through international legal instruments.

The thesis also focuses on the sovereignty of states in the field of international investments. While the thesis recognizes the rights of states over the foreign investments derivind from the economic state sovereignty, the author also examined the limitations existing under international investment law that restrict states' discretionary powers over foreign investments.

A special emphasis is placed on the analysis of the impact of modern technologies on the economic sovereignty of states. International taxation of the multinational corporations conducting business in virtual field is one of the issues concerning the fiscal sovereignty of states. Cryptocurrencies have also affected economic sovereignty of states in a way that it is easier for illicite users to make transactions via cryptocurrencits. Thus, terrorism financing, money laundering and tax evasion are the risks that would be adequately addressed if states opt for regulating transactions made via cryptocurrencies.

The fundamental standpoints of the thesis have been reflected in the scientific articles published by the author and were presented at the meetings of the Chair of European and International Law of Faculty of Law, Yerevan State University.